Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 1

2020թ. Սեպտեմբերի 2-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2020-2021 ուս-տարվա բեռնվածությունների մասին:
2. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
3. 2019-2020 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման հեռավար գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:
4. 2019-2020 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայում, քննարկում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի 9 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2020-2021 ուս-տարվա բեռնվածությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հարգելի գործընկերներ, առաջարկում եմ ծանոթանալ 2020-2021 ուսումնական տարվա բեռնվածությանը:

Ամբիոնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության բաշխումն արդեն հաստատվել է: 2020-2021թթ. ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները հետևյալն են.

1. Սահրադյան Արտակ Իսրայելի - տ.գ.դ., պրոֆեսոր, 1,0 հաստիք,
2. Այվազյան Տիգրան Մկրտչի - ֆ.-մ.գ.թ., պրոֆեսորի պաշտ., 1,0 հաստիք,
3. Խոդերյան Բորիս Արտյոմի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,
4. Օրդյան Նունե Ալբերտի - տ.գ. թ., դոցենտ, 0,5 հաստիք,
5. Վարդանյան Սոնյա Ոսկանի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,
6. Աղաջանյան Մայիս Հայկազի - դոցենտ, 0,5 հաստիք,
7. Հարությունյան Աշոտ Հրայրի - դոցենտ, 1,0 հաստիք:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2020-2021 ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների մասին տեղեկությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ -Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: (տարեկան աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Սահրադյան Ա.-Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ամբիոնի տարեկան աշխատանքային գրաֆիկի ժամանակացույցը: Փոփոխությունների դեպքում նախօրոք դասախոսները կտեղեկացվեն:

Պատրաստ են նաև դասացուցակները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ -2020-2021 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման հեռավար գործընթացի կազմակերպման մասին:
ՈՒսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ, այս ուսումնական տարում դասերը կլինեն առցանց: Classroom հարթակում պետք է տեղադրված լինի ուսումնական փաթեթները և առարկայական նկարագրերը, ինչպես նաև թեմաները և լաբորատոր փորձերի անցկացման մեթոդական ցուցումները:

Գ.Տաբիրյան-Արհեստանոցում կատարվելիք լաբորատոր փորձերի համար ամեն ինչ պատրաստ է: Արդեն առաջին կուրսի ուսանողների հետ անց ենք կացվել առաջին դասը: Դասը անցել է նորմալ: Պահպանել ենք պարետի կողմից սահմանված անվտանգության կանոնները:

Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում էլ ամեն ինչ պատրաստ է դասապրոցեսի համար՝ լաբորատոր փաթեթները և փորձերը:

Հ.Հովհաննիսյան- Այս կիսամյակում 404 լաբորատորիայում նախատեսված էր կարի մոդելավորման լաբորատոր դասերը: Դասապրոցեսի համար պատրաստ են և կարի մեքենաները և կարի համար նախատեսված այլ պարագաներ: Սակայն լաբորատոր դասը անց է կացվելու առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատորիաների վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ -2020-2021 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ, քանի որ մեր ուսումնա-մեթոդական փաթեթներն արդեն պատրաստ են, ուստի խնդրում եմ ևս մեկ անգամ այն վերանայել: Եթե փոփոխության կարիք կա, փոփոխեք և առաջարկում եմ ուս. փաթեթները վերահաստատենք 02.09.2020թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2020-2021 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 02.09.2020թ-ով:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 2

2020թ. Սեպտեմբերի 18-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՈՒսումնական գործընթացը ամբիոնում:
   զեկ. դասախոսներ
2. Դասախոսների 2020-20201ուս. տարվա անհատական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:
3. 1-ին կուրսի մագիստրոսների թեզերի թեմաների մասին:
   2-րդ կուրսի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կոնսուլտացիաների կազմակերպման նախապատրաստումը:
   զեկ.Ն.Օրդյան
4. 2020-2021 ուս. տարվա հեռակա ուսուցման դիմորդների գործերի ընդունելության ընթացքը: զեկ. Ս.Վարդանյան
5. Ընթացիկ հարցեր
   ա/ 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերի հաստատում:
   բ/ հեռակա կուրսերի առարկայական նկարագրերի և հարցաշարերի վերահաստատում: զեկ.Հ.Հովհաննիսյան

Նիստին ներկա էին ամբիոնի 9 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ –ՈՒսումնական գործընթացն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Բ.Խոդերյան-Այս շաբաթ դաս եմ վարել մագիստրոս 1-ին կուրսում: Քանի որ առաջին դասն էր, ուստի բացակա ուսանողներ կային: Հուսամ, որ հաջորդ դասին բացակայություններ քիչ կլինեն:

2)Ա.Հարությունյան-Այս շաբաթ դաս եմ վարել բակալավր 1-ին, 2-րդ և 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում: 1-ին կուրսում դասը եղել է առերես, իսկ 2-րդ, 4-րդ կուրսերում, նաև 2-րդ մագիստրոսների մոտ՝ առցանց: Առցանց դասին կցված էին բոլոր ուսանողները: Դասը ընթացավ նորմալ: Խնդիրներ չկա:

3)Տ.Այվազյան-Ես դասավանդել եմ բակալավր 4-րդ կուրսում և մագիստրատուրա 1-ին կուրսում: 4-րդ կուրսում դասը առցանց էր: Դասին ներկա էրի բոլորը, իսկ 1-ին

մագիոտրոսների մոտ ներկայությունը քիչ էր /դասը առերես էր/: Կարծում եմ հաջորդ դասին բոլորը ներկա կլինեն:

4)Ս.Վարդանյան-Դասավանդել եմ բակալավր 1-ին, 2-րդ կուրսերում, նաև մագիստրոս 1-ին և 2-րդ կուրսերում: Դասերը ամբողջությամբ եղել են առցանց: Բոլոր ուսանողները կցված են դասընթացներին: Որևէ խնդիր չունենք:

5)Ն.Օրդյան –Ես այս շաբաթ դասավանդել եմ միայն բակալավր 4-րդ կուրսում՝ առցանց: Դասը ընթացել է նորմալ: Դասին կցված էին բոլոր ուսանողները:

6)Մ.Աղաջանյան-Քանի որ այց շաբաթ համարիչի շաբաթ էր, իսկ իմ դասերը հայտարարի շաբաթում է գրված, ուստի ես դեռ դաս չեմ ունեցել:

7)Ա.Սահրադյան- Ես նույնպես այս շաբաթ դասավանդել եմ առցանց բակալավրի 2-րդ և 4-րդ կուրսերում: Ամեն ինչ նորմալ է:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ - Դասախոսների 2020-2021ուս. տարվա անհատական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ ինչպես նախորդ ուսումնական տարիներին, այնպես էլ այս ուսումնական տարում պետք է ունենաք Ձեր անհատական աշխատանքային պլաանները: Ուստի խնդրում եմ մինչև հաջորդ շաբաթ ներկայացրեք Ձեր անհատական աշխատանքային պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ -1-ին կուրսի մագիստրոսների թեզերի թեմաների մասին և 2-րդ կուրսի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կոնսուլտացիաների կազմակերպման նախապատրաստման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Այս ուսումնական տարում 1-ին մագիստատուրայում ունենք 8 ուսանող: Խնդրում եմ յուրաքանչյուր դասախոս ներկայացնի մեկ մագիստրոսական թեզի վերնագիր:

Պետք է կազմակերպվի նաև 2-րդ կուրսի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կոնսուլտացիաներ, որի համար տվեք այս կիսամյակի Ձեր կոնսուլտացիաների օրերը և ժամերը: Եղեք հետևողական:

ՈՐՈՇԵՑԻՆ- Յուրաքանչյուր դասախոս ներկայացնի մեկ մագիստրոսական թեզի վերնագիր, ինչպես նաև մագիստրոսների հետ համաձայնացված տալ կոնսուլտոցիայի օրերը և ժամերը, ըստ որի կազմակերպել և իրականացնել առցանց, կամ առերես կոնսուլտացիաներ երկրորդ կուրսի մագիստրոսների հետ:

4. ԼՍԵՑԻՆ-2020-2021 ուս. տարվա հեռակա դիմորդների գործերի ընդունելության ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Այս տարի մեզ մոտ հեռակա ուսուցման համար արդեն դիմել են 10 դիմորդ: Հուսանք, որ մինչև դիմումների ընդունման ավարտը դիմորդների թիվը կավելանա:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերի հաստատում:
Հեռակա կուրսերի առարկայական նկարագրերի և հարցաշարերի վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Հ.Հովհաննիսյան-Առաջարկում եմ 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերը, ինչպես նաև հեռակա կուրսերի առարկայական նկարագրերը և հարցաշարերը վերահաստատել այսօրվա ամբիոնի նիստի ամիս-ամսաթվով՝ 18.09.2020թ-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ-1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերը և հեռակա կուրսերի առարկայական նկարագրերը և հարցաշարերը վերահաստատել 18.09.2020թ-ով:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 3

2020թ. հոկտեմբերի 30-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. ՈՒսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում:
   զեկ. դասախոսներ
2. Հեռակա 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի արդյունքների քննարկում:
   Առկա 4րդ կուրսի պրակտիկայի կազմակերպում:
   զեկ. Բ.Խոդերյան
3. 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:
   զեկ. թեզերի ղեկավարներ
4. Լաբորատոր աշխատանքների վիճակի քննարկում:
   զեկ. դասախոսներ
5. Ամբիոնի աշխատակիցների կողմից կատարվող գիտական աշխատանքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ –ՈՒսումնական գործընթացն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Բ.Խոդերյան-Այս շաբաթ դաս եմ վարել մագիստրոս 1-ին կուրսում: Դասերը ընթանում են նորմալ, բացականեր չունենք:

2)Ա.Հարությունյան-Այս շաբաթ դաս եմ վարել բակալավր 1-ին, 2-րդ և 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում: Դասերն ընթանում են նորմալ: Խնդիրներ չկա:

3)Տ.Այվազյան-Ես դասավանդել եմ բակալավր 4-րդ կուրսում և մագիստրատուրա 1-ին կուրսում: Ամեն ինչ նորմալ է : Բացականեր համարյա թե չկան:

4)Ս.Վարդանյան-Դասավանդել եմ բակալավր 1-ին, 2-րդ կուրսերում, նաև մագիստրոս 1-ին և 2-րդ կուրսերում: Դասերն ամբողջությամբ եղել են առցանց: Բոլոր ուսանողները կցված են դասընթացներին: Որևէ խնդիր չունենք:

5)Ն.Օրդյան –Ես այս շաբաթ դասավանդել եմ բակալավր 4-րդ կուրսում և մագիստրատուրա 2-րդ կուրսերում՝ առցանց: Դասերը ընթացել է նորմալ: Դասին կցված էին բոլոր ուսանողները:

7)Ա.Սահիրադյան- Ես նույնպես այս շաբաթ դասավանդել եմ առցանց բակալավրի 2-րդ և 4-րդ կուրսերում: Ամեն ինչ նորմալ է:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ - Հեռակա 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Այս ուսումնական տարում հեռակա 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան կազմակերպվել էր ,,Ինտերստանոկ ՓԲԸ,,-ում: Պրակտիկան անցել է նորմալ: 26.10.2020-ին տեղի է ունեցել պրակտիկայի պաշտպանություն: Որևէ ինդիր չի եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ-Պրակտիկայի արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ - Առկա 4րդ կուրսի պրակտիկայի կազմակերպում :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Այս ուսումնական տարում բակալավր 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան տեղի է ունենալու նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 20-ը: Պրակտիկան պետք է անցկացվեր դպրոցում, սակայն, քանի որ դպրոցում դասապրոցեսը իրականացվում է առցանց, ուստի մեր ուսանողները կկցվեն պրակտիկայի ղեկավարներ՝ դոցենտ Ս.Վարդանյանի և դոցենտ Ա.Հարությունյանի դասընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- 4-րդ կուրսի պրակտիկան անցկացնել առցանց կերպով:

4. ԼՍԵՑԻՆ-2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Ս.Վարդանյան-Իմ ղեկավարությամբ աշխատում է Աշխեն Քոչարյանը: Բավականին աշխատանք արված է: Մինչև ուսումնական տարվա ավարտը ամեն ինչ կհասցնենք:

2/ Բ.Խոդերյան-Ինձ մոտ ավարտական աշխատանք է կատարում Մերր Գաբրիելյանը և Կարինե Արզումանյանը: Աշխատանքները ընթանում են նորմալ: Մենք էլ մինչև պաշտպանությունը ամեն ինչ կավարտենք:

3/Ա.Հարությունյան-Ես ղեկավարում եմ Նվարդ Ավետիսյանի ավարտական աշխատանքը: Առայժմ ամեն ինչ նորմալ է:

4/ Ն.Օրդյան-Ինձ մոտ իր ավարտական աշխատանքն է կատարում Շուշան Արթենյանը: Աշխատանքը ընթանում է նորմալ: Դժդոհություն չունեմ:
5/Տ.Այվազյան-Ես աշխատում եմ Զինաիդա Առուստամյանի հետ: Բավականին աշխատանք կատարված է: Մինչև պաշտպանությունը կավարտենք:
ՈՐՈՇԵՑԻՆ-Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ - Լաբորատոր աշխատանքների վիճակի քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Բ.Խոդերյան- Ես լաբորատոր պարապմունք ունեմ ,,Ավտոմոբիլ,, և ,,Մեքենաշինության տեխնոլոգիա,, առարկաներից: Լաբորատոր աշխատանքները նունպես կատարվում են առցանց համակարգով: Ուսանողներին բացատրվում է լաբորատոր դասի թեման, բովանդակությունը: Ցուցադրվում է տեսաֆիլմեր: Ամեն ինչ նորմալ է:
2/ Ս.Վարդանյան-Ինձ մոտ լաբորատոր դասեր կա ,,Գծագրություն,, առարկայից: Դասապրոցեսը անց ենք կացնում առցանա: Գծում ենք գծագրեր:
3/Ն.Օրդյան-Ես լաբորատոր դասեր ունեմ ,,Հագուստի մոդելավորում,, առարկայից: Դասի ընթացքում գծում ենք հագուստի գծագիր, այնուհետև մոդելավորունմ ենք: Դասապրոցեսն ընթանում է նորմալ:
4/ Ա.Սահրադյան-Ինփ մոտ լաբորատոր դասեր են անցկացվել ,,Նյութագիտություն,, առարկայից, որն ընթանում է նորմալ:
ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատոր դասապրոցեսը հանարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի աշխատակիցների կողմից կատարվող գիտական աշխատանքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս ուսումնական տարում ցավոք սրտի գիտական աշխատանքների կատարման վիճակը լավ չի՝ կապված երկրում տեղի ունեցող համաճարակային վիճակի հետ: Կա միայն կատարված մեկ գիտական աշխատանք՝ Ա.Սահրադյանի և Ն.Օրդյանի ղեկավարությամբ, որը հանձնված է տպագրության: Հուսանք մյուս տարի ամեն ինչ նորմալ կլինի և դասախոսները կաշխատեն իրենց գիտական աշխատանքների վրա:
ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 5

Դեկտեմբերի 15-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՈՒսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում:
   զեկ. դասախոսներ
2. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:
   զեկ.Ս.Վարդանյան
3. Միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:
4. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը:
   զեկ.Բ.Խոդերյան
5. 2020-2021 ոսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների մասին:
6. Ամբիոնի տարեկան 2020թ-ի հաշվետվություն: (կցված է)
   զեկ. ամբիոնի վարիչ տեխ.գիտ.դոկ., պրոֆեսոր Ա.Ի.Սահրադյան
7. Ընթացիկ հարցեր:
   ա/ Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների և ուսանողների բաշխումը ըստ դասախոսների:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Տ.Այվազյան- Ինձ մոտ առցանց դասերը իրականացվում է միայն 1-ին մագիստրոսների մոտ: Ժամաքանակի ավարտելուն մնաց մեկ դաս: Ընդհանուր առմամբ ամենի ինչ նորմալ է, միայն բացակաները մի քիչ շատ են:

2) Ա.Հարությունյան-Ես դաս ունեմ առկա 1-ին և 2-րդ կուրսերում և մագիստրոս 2-րդ կուրսում: Միակ թերությունը 2-րդ կուրսի բացակայություններն է: Մյուս կուրսերում ուսանողները նորմալ մասնակցում են դասերին:

3) Ն.Օրդյան-Ես դասավանդում եմ միայն մագիստրոս 2-րդ կուրսի մոտ, իսկ բակալավր 4-րդ կուրսը պրակտիկայի է: Գոհ եմ ուսանողներից, դասերը ընթանում են նորմալ: Բացականեր չկա:

4) Ս. Վարդանյան-Ես դասավանդում եմ բակալավր 1-ին, 2-րդ և մագիստրոս 1-ին և 2-րդ կուրսերում: Առաջին բակալավրիատում ըստ ուսումնական ծրագրի դասաժամն արդեն ավարտել ենք, իսկ մյուս կուրսերում մնացել է միայն մեկական ժամ: Ընդհանուր առմամբ

դասերը նորմալ են ընթանում: Բացակայությունները լինում են միայն տեխնիկական խնդիրների պատճառով:
5) Ա.Սահրադյան- Ինձ մոտ էլ 2-րդ կուրսում վաղը կլինի վերջին դասը: Ամեն ինչ նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ - Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Բոլոր ծրագրերը կատարվել են ըստ նախատեսվածի: Բացթողումներ և թերացումներ չեն եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան - Ամբիոնի նիստի քննարկմանն է ներկայացված 2020-2021թ-ի առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննական տոմսերն ու տարբերակները: Դրանք կազմված են ըստ առարկայական նկարագրերում առկա հարցաշարերի և համապատասխանում են չափանիշներին:

Առաջարկում եմ քննական տոմսերը հաստատել 15.12.2020թ-ով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Քննական տոմսերն ու տարբերակները հաստատել 15.12.2020թ-ով:

4. ԼՍԵՑԻՆ- 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Ա.Հարությունյան-Պրակտիկային 4-րդ կուրսի ուսանողները կցված են եղել իմ և Ս.Վարդանյանի դասերին: Ուսանողները ակտիվ մասնակցել են բոլոր դասերին, ինչպես նաև վարել են դասերը: Դասերից հետո ուսանողների հետ քննարկել ենք իրենց վարած դասերը: Պրակտիկայի ընթացքից գոհ եմ:

2)Ս.Վարդանյան-Իմ դասերին ևս կցված են եղել ուսանողները: Ակտիվ մասնակցել և վարել են դասերը: Գոհ եմ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Պրակտիկայի կատարման վիճակը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ- 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Կիսամյակի ընթացքում մասնակցել եմ բոլոր դասախոսների դասընթացներին: Գոհ եմ բոլորի վարած դասերից: Այս իրավիճակում որևէ խնդիր չկա: Համարում եմ, որ ամեն ինչ նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ-2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների ընթացքը համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ- ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի 2020թ-ի տարեկան հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ Ձեզ եմ ներկայացնում 2020 ուսումնական տարվա ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
(հաշվետվությունը կցվում է):

Հաշվետվության քննարկման վերաբերյալ ելույթներ ունեցան պրոֆ. Տ.Այվազյանը, դոցենտներ տ.գ.թ. Բ.Խոդերյանը, Ս.Վարդանյանը, Ն.Օրդյանը, Ա.Հարությունյանը և Մ.Աղաջանյանը, որոնք նշեցին, որ ամբիոնը այս դժվարին ժամանակահատվածում լուրջ ջանքեր է գործադրել թե ուսումնա-դաստիարակչական և թե գիտա-մեթոդական աշխատանքների իրականացման ոլորտում, համագործակցելով առաջավոր ԲՈՒՀ-երի գիտական կենտրոնների հետ:

Որպես թերություն կարելի է նշել այն փաստը, որ ուսանողները հնարավորություն չունեցան տեխնիկական առարկաների լաբորատոր աշխատանքների կատարման ժամանակ իրենց իսկ ձեռքով կատարելու հաստոցների վրա կտրման գործընթացում ջերմության ոլորման, էլեկտրա-աղեղային եռակցման, ջերմամշակման, կարի և հագուստի, ինչպես նաև սննդի տեխնոլոգիայի և ռոբոտոտեխնիկական սարքերով փորձերի կատարմանը: Այս փորձերը ուսանողներին մասամբ ցուցադրվեց առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ամբիոնի տարեկան հաշվետվությունը գնահատել լավ է և ընդունել ի գիտություն:

7. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների և ուսանողների բաշխումը ըստ դասախոսների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ բոլորդ ներկայացրել եք Ձեր ավարտական աշխատանքների թեմաները: Մինչև ուրբաթ օրը 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների հարթակում կտեղադրվի Ձեր կողմից ներկայացրած թեմաները: Հարթակում կկցվեն և դասախոսները և ուսանողները: Ուսանողները կծանոթանան թեմաներին և իրենց ղեկավարներին: Ուսանողներին կներկայացնեք տեղեկություններ և համապատասխան գրականություն իրենց թեմայի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու ուսումնական տարում Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իրականացրել է տարեկան աշխատանքային պլանով նախատեսված ուսումնական աշխատանքներ, որոնք բխել են ամբիոնի կանոնակարգից և ռազմավարական ծրագրերից: 2019-2020 ուսումնական տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5120 ժամ՝ 6,0 հաստիք, որը բաշխվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջև հետևյալ կերպ. ● տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր- 1,0 հաստիք, ● ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար - 1,0 հաստիք, ● տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ - 2,5 հաստիք, ● դոցենտ – 1,5 հաստիք:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Տեխնոլոգիական կրթության ամբիոնը, սպասարկելով «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողներին, կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան ընտրել է դասավանդման և ուսումնառության ժամանակակից ակտիվացնող կրթական մեթոդներ (ինտերակտիվ դասախոսություններ, քննարկումներ)՝ դասավանդման գործընթացը դարձնելով ուսանողակենտրոն: Բացի այդ, Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իրականացրել է ակտիվ գործունեություն Classroom էլեկտրոնային կրթական հարթակում, ստեղծելով ուսումնական պլաններում ներառված դասընթացների էլեկտրոնային փաթեթներ: Դասընթացների էլեկտրոնային փաթեթները հագեցված են եղել ինչպես բուն մասնագիտական, այնպես էլ հավելյալ նյութերով:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների գնահատման համակարգում գործում է 100 միավորանոց սանդղակը: Առկա ուսուցման համակարգով առաջին կուրսերում ուսումնառողների համար գնահատման բաղադրիչները հետևյալն են՝ ● Դասընթացներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ 1. Հաճախում/ մասնակցություն 5% 2. Ընթացիկ ստուգում (լսարանային և էլեկտրոնային) 15%

3. Միջանկյալ ստուգում 1 25%
4. Միջանկյալ ստուգում 2 25%
5. Ամփոփիչ ստուգում 30%

- Դասընթացներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման
  1. Հաճախում/ մասնակցություն 5%
  2. Ընթացիկ ստուգում (լսարանային և էլեկտրոնային) 15%
  3. Միջանկյալ ստուգում 1 40%
  4. Միջանկյալ ստուգում 2 40%
- Դասընթացներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ
  1. Հաճախում/ մասնակցություն 5%
  2. Ընթացիկ ստուգում (լսարանային և էլեկտրոնային) 15%
  3. Միջանկյալ ստուգում 1 40%
  4. Միջանկյալ ստուգում 2 40%

Հեռակա ուսուցման համակարգով առաջին կուրսերում ուսումնառողների համար գնահատման բաղադրիչներն են՝

- Դասընթացներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ
  1. Հաճախում/ մասնակցություն 5%
  2. Առցանց խորհրդատվական շաբաթներին տրված ընթացիկ հանձնարարականների կատարման ստուգում 25%
  3. Առցանց միջանկյալ աշխատանքի ստուգում 25%
  4. Առերես բանավոր ամփոփիչ եզրափակիչ ստուգում 45%
- Դասընթացներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման
  1. Հաճախում/ մասնակցություն 5%
  2. Առցանց խորհրդատվական շաբաթներին տրված ընթացիկ հանձնարարականների կատարման ստուգում 45%
  3. Առցանց միջանկյալ աշխատանքի ստուգում 50%

Առկա համակարգի երկրորդից չորրորդ կուրսերի ուսանողների համար դասընթացների գնահատման բաղադրիչները հետևյալն են՝

- Դասընթացներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ
  1. Հաճախում 5%
  2. Ընթացիկ ստուգում 15%
  3. Միջանկյալ ստուգում 1 30%
  4. Միջանկյալ ստուգում 2 30%
  5. Ամփոփիչ ստուգում 20%
- Դասընթացներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման
  1. Հաճախում 5%
  2. Ընթացիկ ստուգում 35%
  3. Միջանկյալ ստուգում 1 30%
  4. Միջանկյալ ստուգում 2 30%

Հեռակա համակարգի երկրորդից հինգերորդ կուրսերի համար ուսանողների համար դասընթացների գնահատման բաղադրիչները հետևյալն են՝

- Դասընթացներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ
  1. Հաճախում 5%
  2. Ընթացիկ ստուգում 10%
  3. Միջանկյալ ստուգում 1 40%

4. Ինքնուրույնություն 15%
5. Ամփոփիչ ստուգում 30%

- Դասընթացներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման
  1. Հաճախում 5%
  2. Ընթացիկ ստուգում 40%
  3. Միջանկյալ ստուգում 1 40%
  4. Ինքնուրույնություն 15%

Ուսանողների գնահատումն իրականացվել է օբյեկտիվորեն, գնահատականի հետ կապված որևէ խնդրահարույց հարց չի առաջացել և չի քննարկվել:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնն ունեցել է թվով 19 նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր: ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան՝ ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով, ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների լաբորատոր աշխատանքների ապահովման համար, ուսուցումը կազմակերպվել է ըստ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և թեմատիկ տրոհումների, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ ստուգումներով՝ գնահատման համակարգին համապատասխան: Բարձր մակարդակով իրականացվել են ուսումնական պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ: Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և պրակտիկայի պաշտպանության որակին: Պարբերաբար իրականացվում են դասալսումներ և ամբիոնի նիստերում քննարկում առանձին առարկաների դրվածքը:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ.10- 17.01.2020	1. Էլեկտրոնային ուսուցման գործառույթներին համապատասխան դասախոսների հաշվետվությունը: 2. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում: 3. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:	1.Կատարված աշխատանքները համարել բավարար: 2. 2րդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները հաստատել 17.01.2020 ամսաթվով: 3. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

	4. Հեռակա ուսուցման բաժնի 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման մասին: 5. 2-րդ կիսամյակի առարկաների քննարկում և հաստատում: 6. Ընթացիկ հարցեր:	4.Դիպլոմային աշխատանքների կատարման կարգը համարել բավարար: 5.Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները:
Արձ.11-07.02.2020	1. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: 2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին /դասացուցակներ, էլեկտրոնային հարթակուն դասընթացների տեղադրումը՝ ուսումնական փաթեթներ, հարցաշարեր 3. Ուսումնական լաբորատորիաների վիճակը: 4. "Կիրառական մեխանիկա" առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը /հեռակա և առկա բաժնի համար/: 5. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը: 6. Հեռակա ուսուցման 3-րդ և 5-րդ կուրսերի 10.02.2020թ-ից մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին: 7. Ընթացիկ հարցեր:	1. Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար: 2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների կատարման վիճակը համարել բավարար: 3. Լաբորատորիաների և լաբորատոր աշխատանքների վիճակը համարել բավարար: 4. Հաստատել կուրսային նախագծերի թեմաներ և բաշխել ուսանողներին: 5. Հաստատել 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը: 6. Մանկավարժական պրակտիկայի խնդիրները խնդիրները համարել բավարար:
Արձ.12-19.02.2020	1. 2021-2025թթ. «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի ռազմավարական ծրագրի քննարկում: 2. Ընթացիկ հարցեր:	1. Հաստատել «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի 2021-2025թթ. ռազմավարական ծրագիրը: Հաստատել «Ռազմավարական ուղենիշները և իրականացման պլան ժամանակացույց»-ը

Արձ.13-25.03.2020	1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով: 2. Google classroom հարթակի հնարավորությունների լիարժեք օգտագործումը: 3. Միջանկյալ գրավորների իրականացման ընթացքը: 4. Բարելավման գործողությունների իրականացում: 5. Ընթացիկ հարցեր:	1. Ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. Առաջարկը ընդունել և ի կատար ածել: 3. Միջանկյալ գրավորների իրականացման ընթացքը համարել բավարար: 4. Տեղեկությունն ընդունել ի գիտություն և ամբիոնի որակի պատասխանատուին հանձնարարվեց զբաղվել այդ հարցով:
Արձ.14-02.04.2020	1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով: 2. Ընթացիկ հարցեր: ● Ուսանողների վարձավճարների մասին:	1. Ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. Հորդորել ուսանողներին մինչև միջանկյալ ստուգումների սկսվելը վարձավճարները վճարեն:
Արձ.15-10.04.2020	1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով: զեկ. դասախոսներ 2. Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունների մասին: 3. Հեռակա կուրսերի միջանկյալ տոմսերի հաստատման մասին: 4. Մագիստրոս 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը: 5. Բակալավր 3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման ու անցկացման մասին: զեկ. Բ.Խոդերյան 6. Ընթացիկ հարցեր: ● Բակալավր 4-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ատենախոսությունների ատեստավորման մասին:	1. Ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունների կատարման կարգը համարել բավարար: 3. Հեռակա կուրսերի միջանկյալ տոմսերը հաստատել 10.04.2020թ-ով: 4. Մագիստրոս 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը համարել բավարար: 5. Պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը ընդունել ի գիտություն: 6. Ատեստավորել բակալավր 4-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական աշխատանքները:
Արձ.16-20.04.2020	1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց 2. հեռավար մեթոդով:	1. Ուսումնական գործնթացը համարել բավարար: 2. Սպասել համապատասխան որոշման:

	Առաջարկներ ամփոփիչ ստուգումները առցանց կազմակերպելու վերաբերյալ: 3. Առաջարկներ ավարտական ատեստավորման աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ 4. Ընթացիկ հարցեր:	3. Առաջարկը ներկայացնել ռեկտորատ և սպասել համապատասխան հրահանգների:
Արձ.17-28.04.2020	1. Երրորդ կուրսի պրակտիկայի ընթացքը: 2. Ավարտական կուրսերի նախապաշտպանությունների և թեզերի մասին: 3. Ամփոփիչ քննությունների ընթացակարգը: 4. Հեռակա 5-րդ կուրսի շրջանավարտների ավարտական աշխատանքների մասին: 5. Ընթացիկ հարցեր:	1. Պրակտիկայի ընթասքը համարել բավարար: 2. Ավարտական կուրսերի նախապաշտպանությունների և թեզերի մասին տեղեկությունները ընդունել ի գիտություն: 3. Ամփոփիչ քննությունների ընթացակարգը համարել բավարար: 4. Հեռակա 5-րդ կուրսի շրջանավարտների ավարտական աշխատանքների ընթացքը համարել բավարար:
Արձ.18-13.05.2020	1. Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական թեմաների նախապաշտպանությունները	1. Թեև բոլոր աշխատանքներում էլ կային որոշակի թերություններ, որոնք մինչև պաշտպանությունը ամպայման կշտկվեն՝ երաշխավորել պաշտպանության:
Արձ.19-14.05.2020	1. Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը	1. Թույլատրել մասնակցել պաշտպանության:
Արձ.20-21.05.2020	1. Առցանց հեռավար ուսումնական գործընթացների ընթացքը: 2. 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ավարտը և բանկային պրակտիկայի կազմակերպումը: 3. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ քննությունների ընթացքը: 4. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերի հաստատման մասին: 5. Ընթացիկ հարցեր:	1. Առցանց հեռավար ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ավարտը և բանկային պրակտիկայի կազմակերպումը համարել բավարար: 3. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ քննությունների ընթացքը համարել բավարար: 4. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերը հաստատել 21.05.2020թ-ով:

	ա/մագիստրոսական թեզի գրախոսականի և ղեկավարի կարծիքի, բակալավրի ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքի մասին:	5. Ի կատար ածել:
Արձ.21-27.05.2020	1. Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական թեմաների նախապաշտպանությունը	1. Թույլատրել մասնակցել պաշտպանությանը:
Արձ.22-24.06.2020	1. Միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքը: 2. Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման մասին (գրախոսական, կարծիք): 3. Ընթացիկ հարցեր:	1. Միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքը համարել բավարար: 2. Մեկ-երկու օրվա ընթացքում աշխատանքների վերաբերյալ կարծիքները և գրախոսականները ներկայացնել:
Արձ.23-09.07.2020	1. 2019-2020 ուս. տարվա ամբիոնի հաշվետվությունը: 2. Պետական քննությունների արդյունքների մասին: 3. 2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին: 4. Ընթացիկ հարցեր:	1. Ամբիոնում կատարված աշխատանքները համարել լավ: 2. Պետական քննությունների արդյունքները համարել բավարար: 3. 2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն
Արձ.1-02.09.2020	1. Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2020-2021 ուս-տարվա բեռնվածությունների մասին: 2. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 3. 2019-2020 ուս-տարվա առարկաների դասախոսությունների դասավանդման հեռավար գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման և լաբորատոր փորձերի անցկացման մասին:	1. 2020-2021 ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների մասին տեղեկությունն ընդունել ի գիտություն: 2. Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանը: 3. Լաբորատորիաների վիճակը համարել բավարար: 4. 2020-2021 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 02.09.2020թ-ով:

	4. 2019-2020 ուսումնական տարվա առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայում, քննարկում և հաստատում: 5. Ընթացիկ հարցեր	
Արձ.2-18.09.2020	1. ՈՒսումնական գործընթացը ամբիոնում: 2. Դասախոսների 2020-20201ուս. տարվա անհատական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում: 3. 1-ին կուրսի մագիստրոսների թեզերի թեմաների մասին: 2-րդ կուրսի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կոնսուլտացիաների կազմակերպման նախապատրաստումը: 4. 2020-2021 ուս. տարվա հեռակա ուսուցման դիմորդների գործերի ընդունելության ընթացքը: 5. Ընթացիկ հարցեր ա/ 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերի հաստատում: բ/ հեռակա կուրսերի առարկայական նկարագրերի և հարցաշարերի վերահաստատում:	1. Ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. Ընդունել ի գիտություն: 3. Յուրաքանչյուր դասախոս ներկայացնի մեկ մագիստրոսական թեզի վերնագիր, ինչպես նաև մագիստրոսների հետ համաձայնացված տալ կոնսուլտոցիայի օրերը և ժամերը, ըստ որի կազմակերպել և իրականացնել առցանց, կամ առերես կոնսուլտացիաներ երկրորդ կուրսի մագիստրոսների հետ: 4. Ընդունել ի գիտություն: 5. 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգման տոմսերը և հեռակա կուրսերի առարկայական նկարագրերը և հարցաշարերը վերահաստատել 18.09.2020թ-ով:
Արձ.3-30.10.2020	1. ՈՒսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում: 2. Հեռակա 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի արդյունքների քննարկում: Առկա 4րդ կուրսի պրակտիկայի կազմակերպում: 3. 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: 4. Լաբորատոր աշխատանքների վիճակի քննարկում: 5. Ամբիոնի աշխատակիցների կողմից կատարվող գիտական աշխատանքների քննարկում: 6. Ընթացիկ հարցեր:	1. Ուսումնական գործընթացը համարել բավարար: 2. Պրակտիկայի արդյունքները համարել բավարար: 3. 4-րդ կուրսի պրակտիկան անցկացնել առցանց կերպով: 4. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար: 5. Լաբորատոր դասապրոցեսը համարել բավարար: 6. Ընդունել ի գիտություն:

Արձ.4-26.11.2020	1. Ուսումնական առցանց գործընթացն ամբիոնում: 2. Ամբիոնի հայցորդների հաշվետվությունը 2020-2021 ուս.տարում: 3. 2-րդ կուրսի մագիստրոսների ուսումնահետազոտական պրակտիկայի մասին: 4. 4-րդ կուրսի բակալավրիատի ուսումնական պրակտիկայի մասին: 5. Ընթացիկ հարցեր: ա/ուսանողների վարձավճարների հարցը: բ/առկա բակալավրիատի միջանկյալ ստուգումների վերաբերյալ:	1. Ուսումնական գործընթացը ամբիոնում համարել բավարար: 2. Հաշվետվությունները հաստատել և ատեստավորել: 3. 2-րդ կուրսի մագիստրանտների ուսումնա-հետազոտական պրակտիկայի ընթացքը համարել բավարար: 4. 4-րդ կուսի բակալավրիատի ուսումնական պրակտիկայի ընթացքը համարել բավարար: 5. Առկա բակալավրիատի միջանկյալ ստուգումների վերաբերյալ տեղեկությունն ընդունել ի գիտություն:
Արձ.5-15.12.2020	1. Ուսումնական առցանց գործընթացների ընթացքն ամբիոնում: 2. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը: 3. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատում: 4. 4-րդ կուրսի բակալավրիատի ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքների քննարկում: 5. 2020-2021 ոսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների մասին: 6. Ամբիոնի տարեկան 2020թ-ի հաշվետվության քննարկում: 7. Ընթացիկ հարցեր	8. Ուսումնական գործընթացը ամբիոնում համարել բավարար: 9. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար: 10. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերը հաստատել 15.12.2020թ. 11. Պրակտիկայի կատարման վիճակը համարել բավարար: 12. Դասալսումների ընթացքը համարել բավարար: 13. Հաստատել «Տեխնոլոգիա կրթության» ամբիոնի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	1	1	2	3	4	-	-	6
Համա	1	-	-	1	1	-	-	1

տեղող								
Ժամա վճարայ ին	-	-	-	-	-	-	-	-
Ընդա- մենը	2	1	2	4	5	-	-	7

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել են ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ: Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին: Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են դասալսումներ՝ ըստ նախապես հաստատված գրաֆիկի: Վերամշակվել են ամբիոնի բակալավրիական և մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրերը, որոնք համապատասխանում են ՄԿԾ-ՈԱԾ համապատասխանեցման գործիքակազմին և ՈԱԾ-ի ներդրման և իրականացման մեխանիզմներին:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ									

Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Հաշվետու տարում ամբիոնի դասախոսները տպագրել են թվով 4 գիտական հոդված:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի կազմակերպած սեմինարները, տպագրած հոդվածները, ուսումնամեթոդական ձեռնարկները և դասագրքերը նպաստում են ամբիոնի գիտական զարգացմանը: Ամբիոնի դասախոսները համատեղ գիտահետազոտական աշխատանք են կատարում մագիստրատուրայի ուսանողների հետ: Ամբիոնն ունի 2 հայցորդ, ովքեր իրենց ղեկավարի հետ համատեղ իրականացրել են հետազոտական աշխատանք և հաշվետվության տեսքով ներկայացրել ամբիոնի գիտական սեմինարի ժամանակ: Ամբիոնում կազմակերպվել է թվով 6 գիտական սեմինար՝ ● առկա ուսուցման 4-րդ կուրսի և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների կատարման մասին զեկուցում, ● 1-ին և 2-րդ կուրսերի մագիսրանտների մագիստրոսական թեզերի զեկուցում, ● ամբիոնի դասախոսների գիտական զեկուցումներ, ● ամբիոնի հայցորդների ատեստավորում:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			

	Կիրառական			

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Саградян, С. Агбалян, А. Мартиросян, Н. Ордян, Х. Погосян	Изучение возможностей оптимизации технологии изготовления алмазных инструментов на металлической связке. Різання та інструменти в технологічних системах. (Cutting & Tools in Technological System) № 92 (2020) Харков, Украина ISSN 2078-7405 , doi: 10.20998/2078–7405.2020.92.14 http://rits.khpi.edu.ua/article/view/2078-7405.2020.92.14/203325	c136-143
С.Г. Агбалян, Н.А. Ордян, А.М. Мартиросян, А.С. Агбалян, Х.В. Погосян	Исследование механизма структурообразования в переходном слое металлоалмазных композиционных материалов с металлизированными алмазными зернами, полученных жидкофазным свободным спеканием Вестник НПУА. Серия Металлургия, материаловедение, недропользование № 1, Ереван год	С39-51
Мартиросян А.М., Агбалян С.Г., Ордян Н.А., Агбалян А. С., Погосян Х.В.	РАЗРАБОТКА СВЯЗКИ ДЛЯ ИЗГОТОВЛЕНИЯ ЭФФЕКТИВНОГО АЛМАЗНО-МЕТАЛЛИЧЕСКОГО ИНСТРУМЕНТА МЕТОДОМ СВОБОДНОГО СПЕКАНИЯ	С. 3

	12-ая Международная конференция «Углерод: фундаментальные проблемы науки, материаловедение, технология».Сборник тезисы бокладов. Москва, Троицк, 27-28 октябрь, год http://ruscarbon.org/tisncmdocs/2020/CFPMST_2020_Program_24102020.pdf	
Ս.Գ. Աղբալյան, Ն. Ա. Օրդյան, Ա. Մ. Մարտիրոսյան, Ա. Աղբալյան, Խ. Պողոսյան	Տիտանով մետաղապատված ալմաստային հատիկներով և 51%Fe+9%Ni+32%Cu+8%Sn բաղադրությամբ կապակցանյութով պատրաստված հղկագործիքների կառուցվածքագոյացման գործընթացի և մաշակայունության հետազոտումը Ձեկուցման թեզիս: Հայաստանյան Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տ ա ր ե կ ա ն գ ի տ ա ժ ո ղ ո վի զեկույցների գիտական ժողովածու: Ք. Երևան, ՀԱՊՀ, դեկտեմբերի 2-10-ը 2020	էջ 13

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
2-րդ կուրսի մագիստրոսների զեկուցումները իրենց թեզերի կատարման մասին	առցանց, մայիսի 14
5-րդ կուրսի հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման մասին	առցանց, մայիսի 27
Ամբիոնի դասախոսների զեկուցում	առցանց հունիսի 9
Հայցորդների ատեստավորում	առցանց նոյեմբերի 26

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը զարգացնում է համագործակցությունը արտասահմանյան մասնագիտական կառույցների հետ՝ ապահովելով կրթական ծրագրերի իրականացումը: Ամբիոնը մեթոդական և հետազոտական ոլորտում համագործակցում է՝ Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանի «Կիևի Իգոր Սիկորսկի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ» (Ուկրաինա) և Վ.Ն. Բակուլի անվան գերկարծր նյութերի ինստիտուտի (Ուկրաինա) հետ:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
• ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի(ՖԿՊԻ) «Նյութագիտության» լաբորատորիայի հետ, • ՀՊՃՀ -ի «Մետալուրգիայի և նյութագիտության» գիտական լաբորատորիայի հետ, • տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ, • Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ (Գիտական խորհրդի և Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ գիտական և գիտամեթոդական ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ Ա.Սահրադյան) • Национальный технический университет Украины «Киевский политехнический институт имени Игоря Сикорского»(А.И.Саградян в составе редакционной коллегии научного журнала Приборостроение), • Украина, Журнал научных трудов <<Социальное развитие и безопасность>>(А.И.Саградян в составе редакционной коллегии), • Journal " Ukrainian Journal of Mechanical Engineering and Materials Science"(A.I.Sagradian in the editorial board), • Ukrainian Journal of Scientific Papers "Social development and Security"(A.I.Sagradian in the editorial board:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				

Համագործակցային միջազգային ծրագրեր

Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
2020ուս տարում համաձարակով պայմանավորված ամբիոնը մասնագիտական կողմնորոշում իրականացրել է առցանց՝ ուսումնական հաստատությունների տնօրենների և փոխտնօրենների հետ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
Մեթոդական			
Դաստիարակչական			

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է որակի ապահովման մի շարք գործառույթներ, որոնք համապատասխանում են Տեխնոլոգիական կրթության ամբիոնի որակի ապահովման քաղաքականությանը:

Ամբիոնի որակի հանձնախմբի կազմում ներգրավված են ամբիոնի վարիչը՝ որպես որակի համակարգող, ինչպես նաև մեկ դասախոս: Որակի ապահովման քաղաքականության դրույթներին համապատասխան Տեխնոլոգիական կրթության ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերը սպասարկում են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա և հեռակա համակարգով սովորող ուսանողներին և ապահովում են նշված մասնագիտության ՄԿԾ-ների լիարժեք իրականացումը (ՄԿԾ-ները տես ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կայք-էջում): Առցանց ուսուցման կազմակերպման նկատառումներից ելնելով՝ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի որակի հանձնախումբն իրականացնում է ՄԿԾ-ներով նախատեսված դասընթացների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնամեթոդական փաթեթների, քննական հարցաշարերի և այլ նյութերի (ըստ անհրաժեշտության) քննարկում: Այնուհետև դրանք քննարկվում են ամբիոնի նիստերում և հաստատումից հետո միայն տեղադրվում են Google Classroom էլեկտրոնային հարթակ: Դասավանդման գործընթացի վերահսկման և որակի ապահովման տեսակետից ամբիոնի վարիչն իրականացնում է դասալսումներ՝ ըստ հաստատված ժամանակացույցի: Դասալսումից անմիջապես հետո դասախոսը ծանոթանում է դիտարկման արդյունքներին և դասընթացի որակի բարձրացմանն ուղղված բարելավման առաջարկներին (վերջինների մասին գրառումներն առկա են դասալսումների մատյանում և դասալսման թերթիկների վրա): Նախկին շրջանավարտների և ներկայիս ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման տեսակետից ամբիոնն իրականացնում է ակտիվ գործունեություն սոցիալական ցանցերի՝ մասնավորապես «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» ֆեյսբուքյան էջի միջոցով: Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իր լավագույն, այն է՝ բարձր առաջադիմությամբ մագիստրանտներին և շրջանավարտներին ապահովում է աշխատանքով՝ հանրակրթական դպրոցներում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն աշխատանքի է տեղավորել թվով 2 շրջանավարտի և 2 մագիստրանտի:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Ա.Հ.Սահրադյան	Ամբիոնի դասախոսները ցուցաբերում են առարկայի լայն և խորը իմացություն, դասախոսության

		ընթացքում ներառում են բազմազանություն, ստեղծում են դասավանդման միջավայր, ինչպես նաև տրամադրում են էլեկտրոնային ուսումնական նյութեր:
Միջանկյալ և ամփոփիչ քննական տարբերակների մշտադիտարկում	Ա.Ի.Սահրադյան Բ.Ա.Խոդերյան Ս.Ո.Վարդանյան	ՈՒսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գնահատման նոր համակարգերին համապատասխան, միջանկյալ և ամփոփիչ քննական տարբերակները համապատասխանում են առարկայական նկարագրերին և թեմատիկ տրոհմանը:
Մագիստրանտների ատեստավորում	Ա.Ի.Սահրադյան Բ.Ա.Խոդերյան Ս.Ո.Վարդանյան Ն.Ա. Օրդյան	Յուրաքանչյուր կիսամյակ իրականացվում է 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսների ատեստավորում՝ ըստ նախապես սահմանված գրաֆիկի:
Ուսումնական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում	Ա.Ի.Սահրադյան Բ.Ա.Խոդերյան	Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ: Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և հաշվետվությունների

		հանձնաժողովի կողմից քննարկմանն ու որակին: Պրակտիկայի պաշտպանությունների ժամանակ ուսանողները գնահատվել են բարձր գնահատականներով և ըստ արժանվույն:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրադյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 4

Նոյեմբերի 26-ի ի տեղի ունեցած Տեխնոլոգիական

կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ուսումնական գործընթացը ամբիոնում:
զեկ. դասախոսներ
2. Ամբիոնի հայցորդների հաշվետվությունը 2020-2021ուս. տարում:
զեկ.Ա.Հակոբյան, Հ.Այվազյան
3. 2-րդ կուրսի մագիստրոսների ուսումնա-հետազոտական պրակտիկայի ընթացքը:
զեկ.Բ.Խոդերյան
4. 4-րդ կուսի բակալավրիատի ուսումնական պրակտիկայի ընթացքը
զեկ.Բ.Խոդերյան
5. Ընթացիկ հարցեր
ա/ Առկա բակալավրիատի միջանկյալ ստուգումների վերաբերյալ:
զեկ.Ն.Օրդյան

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը ամբիոնում:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բոլոր դասախոսները նշեցին, որ դասերը ընթանում են նորմալ, բացականեր գրեթե չկան: Ամեն ինչ նորմալ է:
ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ -Ամբիոնի հայցորդների հաշվետվությունը 2020-2021ուս. տարում:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Մենք ամբիոնում ունենք երկու հայցորդ՝ Աննա Հակոբյանը և Հասմիկ Այվազյանը: Լսենք հայցորդների հաշվետվությունը 2020-2021 ուս. տարվա կատարած գիտա-մեթոդական աշխատանքների վերաբերյալ:
Ա.Հակոբյան- Իմ աշխատանքի թեման է «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի ,,Տեխնոլոգիա,, առարկայի ուսուցման գործընթացում»: Մինչ այս հանձնել եմ բոլոր քննությունները /մինիմումները/, մնացել է միայն մասնագիտական քննությունը, այն էլ պետք է հանձնել հիմնական աշխատանքի 80%-ը պատրաստ լինելուց հետո: Հիմնականում աշխատել եմ հոդվածների վրա: Մեկ

հոդված պետք է հրատարակվեր մինչև այս տարվա ավարտը, սակայն ներկա իրավիճակից ելնելով, երեևի կհրատարակվի հաջորդ տարի: Մեկ հոդված էլ նախատեսել եմ 2021թ-ին, այժմ աշխատում եմ հոդվածի վրա: Թեկնածուական ատենախոսության նյութը բավականին կատարված է: Հուսամ, մինչև գարուն պատրաստ կլինի:

Հ.Այվազյան-Իմ աշխատանքի թեման է «Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական խնդիրները ժամանակակից հանրակրթական դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում: Ես այս տարի հոդվածների հարցով մի քիչ պասիվ եմ եղել, բայց ունեմ արդեն հրատարակված 8 հոդված: Առաջիկայում պատրաստում եմ 2 հոդված: Տարվա ընթացքում մասնակցել եմ տարբեր կոնֆերանսների: Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացրել եմ տարվա ընթացքում իմ կատարած աշխատանքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաշվետվությունները հաստատել և ատեստավորել:

/հաշվետվությունները կցվում են/:

3. ԼՍԵՑԻՆ-2-րդ կուրսի մագիստրոսների ուսումնա-հետազոտական պրակտիկայի ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Բ.Խոդորյան-Այս կիսամյակում 2-րդ կուրսի 6 մագիստորս մասնակցել են ուսումնա-հետազոտական պրակտիկային: Պրակտիկայի ընթացքում 3 ուսանող կցվեցին Ա.Հարությունյանի, 3 ուսանող էլ Ս.Վարդանյանի դասերին: Ուսանողները մասնակցել են դասերին, նաև ինքնուրույն վարել են դասերը:

2/ Ա.Սահրադյան-Պրակտիկայի ընթացքին հետևել եմ առցանց և բարձր եմ գնահատում կցված դասախոսների կողմից մագիստրոսների հետ տարվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ պրակտիկայի ընթացքը նորմալ է եղել: Ուսանողները կներկայացնեն իրենց հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կուրսի մագիստրանտների ուսումնա-հետազոտական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ- 4-րդ կուսի բակալավրիատի ուսումնական պրակտիկայի ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդորյան-4-րդ կուրսի պրակտիկան այժմ ընթացքի մեջ է: Ուսանողները կցված են տարբեր դասընթացների, լսում են դասերը, ինչպես նաև մասնակցում են դասապրոցեսին, վարում են դասերը: Պրակտիկայի վերջում կներկայացնեն հաշվետվություն՝ թղթապանակի տեսքով: Հունվարի վերջին կլինի պրակտիկայի պաշտպանություն, և ուսանողները կհանձնեն իրենց թղթապանակները:

ՈՐՈՇԵՑԻՆ-4-րդ կուսի բակալավրիատի ուսումնական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

5. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ -Առկա բակալավրիատի միջանկյալ ստուգումների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Օրդյան-Այս կիսամյակում ռեկտորատի որոշմամբ բոլոր առարկաներից լինելու է մեկ միջանկյալ ստուգում կամ քննություն՝ դեկտեմբերի 21-ից 27-ը: Գրաֆիկները կկազմեմ, կտեղեկացնեմ բոլոր դասախոսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առկա բակալավրիատի միջանկյալ ստուգումների վերաբերյալ տեղեկությունն ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.6

Հունվարի 22-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում:
   զեկ. դասախոսներ
2. 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:
   զեկ. Ա.Սահրադյան
3. Առկա ուսուցման 2-րդ կուրսի շարունակական պրակտիկայի հարցի քննարկում:
   զեկ.Խոդերյան
4. Հեռակա 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստական գործընթացների մասին:
   զեկ.Խոդերյան
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը առցանց դասընթացի պայմաններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ հեռակա 3-րդ և 4-րդ կուրսերում: Դասընթացները տեղի են ունենում նորմալ: Բացակայող ուսանողներ կան, բայց շատ չեն:

2) Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ հեռակա 1-ին,2-րդ, 3-րդ և 5-րդ կուրսերում: Դասերը ընթանում են նորմալ: Ինձ մոտ էլ բացակայությունը այնքան էլ շատ չի, միայն 1-ին կուրսի տղաները համարյա չեն ներկայանում դասին, որովհետև, ըստ իրենց ավագի, վայենկոմատ են գնում:

3) Ն.Օրդյան-Ես դասավանդում եմ միայն հեռակա 5-րդ կուրսում: Ինձ մոտ ամեն ինչ նորմալ է: Բացականեր գրեթե չկան:

4) Ս. Վարդանյան-Ես դասավանդում եմ 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում: Դասապրոցեսը նորմալ է:

5)Բ. Խոդերյան-Ես դասավանդում եմ 4-րդ և 5-րդ կուրսերում: Ամեն ինչ նորմալ է: Ինձ մոտ էլ 4-րդ կուրսում սիստեմատիկ բացակայել է Բաղիրյան Հասկերը, իսկ 5-րդ կուրսում ուսանողները նորմալ միանում են դասին:
6)Մ.Աղաջանյան- Ես նույնպես դասավանդում եմ 4-րդ և 5-րդ կուրսերում: Դասերը նորմալ իրականացնում ենք: Ամեն ինչ կարգին է:
7) Ա.Սահրադյան- Ես դասավանդում եմ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերում: Դասապրոցեսը ընթանում է նորմալ: Բացակայողներ երբեմն լինում են:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացն առցանց դասընթացի պայմաններում համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ -2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկման և հաստատման հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -Ա.Սահրադյան- Քանի որ առաջին կիսամյակի առարկայական ուսումնական փաթեթները հաստատել ենք կիսամյակի սկզբում, ուստի երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթները պետք է քննարկենք և վերահաստատենք այս կիսամյակի համար: Առաջարկում եմ առարկայական փաթեթները վերանայենք և վերահաստատենք այսօրվա ամբիոնի նիստով:

ՈՐՈՇԵՑԻՆ – 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթները վերահաստատել 22.01.2021թ-ով:

3. ԼՍԵՑԻՆ- Առկա ուսուցման 2-րդ կուրսի շարունակական պրակտիկայի հարցի քննարկումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ.Խոդերյան – Այս տարի ըստ ուսումնական պլանի առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողների ուսումնաճանաչողական շարունակական պրակտիկան պազմակերպվելու է 2021թ.-ի փետրվարի 22-ից մինչև մայիսի 21-ը՝ շաբաթական մեկ օր հ.54 դպրոցում: Հարցը համաձայնեցված է դպրոցի տնօրինության հետ: Պրակտիկայի մեթոդիստն է Ա.Հարությունյանը: Հուսանք այս պայմաններում պրակտիկայի ընթացքը կլինի նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առկա ուսուցման 2-րդ կուրսի շարունակական պրակտիկայի հարցը համարել քննարկված:

4. ԼՍԵՑԻՆ- Հեռակա 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստական գործընթացների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ.Խոդերյան-Այս կիսամյակում ըստ հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան պետք է կազմակերպվի փետրվարի 22-ից մարտի 19-ը ժամանակահատվածում: Պրակտիկայի ղեկավարներն են մեթոդիստներ Մ.Աղաջանյանը և Տ.Այվազյանը: Պրակտիկան պետք է անցկացվեր դպրոցում, սակայն

համավարակի պատճառով ուսանողները չեն կարող հաճախել դպրոցներ, ուստի պրակտիկան իրականացնելու համար կկցվեն առկա բակալավր 1-ին և 2-րդ կուրսերի դասընթացներին՝ առցանց:

4-րդ հեռակա կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան ըստ ուսումնական պլանի նախատեսված է փետրվարի 22-ից մարտի 5-ը: Այս ուսանողները իրենց պրակտիկան կանցկացնեն Մ Ջամբազյանի անվան թ.79 հիմնական դպրոցի «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում՝ առցանց: Պրակտիկայի ղեկավարն է մեթոդիստ Տ.Այվազյանը:

Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան պետք է կազմակերպել մարտի 1-ից մինչև մարտի 26ը կրկին առցանց: Այս կուրսի ուսանողները նույնպես կկցվեն առկա 1-ին և 2-րդ կուրսերի դասընթացներին: Պրակտիկայի ղեկավարներն են մեթոդիստ Ա. Սահրադյանը և Տ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստական գործընթացները համարել բավարար:

5. Ընթացիկ հարցերի տեսակետից չափազանց կարևոր եմ համարում 2021թ-ի ընդունելության վերաբերյալ ամբիոնի աշխատակիցների կողմից պլանավորված մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական կրթօջախներում: Այս աշխատանքների էֆեկտիվության բարձրացման համար կարծում եմ անհրաժեշտ է ներգրավել մեր լավագույն շրջանավարտ-ուսուցիչներին և ուսուցչուհիներին ինչպես նաև մեր մագիստրոսներին: Համոզված եմ, որ այս աշխատանքները պետք է սկսել հենց վաղվանից: Այսուհետ մեր ամբիոնի նիստերում պարբերաբար կքննարկենք աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրադյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ.7

Փետրվարի 15-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Առցանց և առկա ուսուցման վիճակը:

զեկ. դասախոսներ

2. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

զեկ. Օրդյան Ն.

3. Ուսումնական լաբորատորիաների վիճակը, երկրորդ կիսամյակի լաբորատոր դասաժամերի ընթացքի վերաբերյալ:

զեկ.Կ.Զաքարյան, Գ.Տաբիրյան, Հ.Հովհաննիսյան

4. “Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը:

զեկ. Ս.Վարդանյան

5. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:

6. Հեռակա ուսուցման պրակտիկայի 3-րդ, 4-րդ կուրսերի և առկա 2-րդ կուրսի շարունակական պրակտիկայի վիճակի քննարկում և հեռակա 5-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին:

Զեկ. Խոդերյան Բ.

6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Առցանց և առկա ուսուցման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Ն.Օրդյան-Այս կիսամյակում ունեմ մեկ դասընթաց՝ ՏԳԱ-դասախոսությունը առցանց է: Դասը ընթանում է նորմալ: Բացակայություններ չկան:

2/Ս.Վարդանյան-Դասավանդում եմ առկա բակալավր 2-րդ և 4-րդ կուրսերում և առկա մագիստրոս 2-րդ կուրսում: Դասերը առերես են: Պարբերաբար բացակայող ուսանողներ չկան:

3/Ա.Հարությունյան-Ինձ մոտ հեռակա կուրսերի դասերը ավարտվել են: Առկա բակալավր 4-րդ կուրսում նորմալ դասընթացներն ընթանում են: Դասերը առերես են: Բացակայությունները քիչ են:

4/Բ.Խոդերյան-Ունեմ և առցանց և առերես դասընթացներ: Դասերի ընթացքը նորմալ է, մշտական բացակայող ուսանողներ չունենք:

5/Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ առկա բակալավր 4-րդ և մագիստրատուրայի 1-ին ու 2-րդ կուրսերում: Դասերը և առցանց են և առերես: Ամեն ինչ նորմալ է: Բացակայությունները քիչ են:

6/Ա.Սահրադյան-Իմ դասերը առկա բակալավր 1-ին, ինչպես նաև ԱՄ 1-ին և 2-րդ կուրսերում է: Դասերին մասնակցում են ՀԲ-3-րդ կուրսի պրակտիկանտները: Որևէ խնդիր չկա: Լավ ուսանողներ են, շատ լավ աշխատում են:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առցանց և առկա ուսուցման վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Առաջին կիսամյակում առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Վանոյանը ուներ 2 առարկայի պարտք, որոնք հանձնել է լուծարքի ժամանակ և գնահատվել է դրական:

Հեռակա բակալավրիատում լուծարքները կսկսվեն հաջորդ շաբաթվանից:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Ուսումնական լաբորատորիաների վիճակը, երկրորդ կիսամյակի լաբորատոր դասաժամերի ընթացքի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Կ.Զաքարյան-Այս կիսամյակում որևէ լաբորատոր փորձ չենք կարող իրականացնել, քանի որ չունենք երրորդ կուրս, որոնց դասավանդվող առարկաների լաբորատոր փորձերը անց էին կացվում 407 լսարանում:

2/Գ.Տաբիրյան-Ուսումնական արհեստանոցում իրականացվում է ԱԲ 1-ին կուրսի ,,Տեխնոլոգիական պրակտիկում,, (դասախոս Մ.Աղաջանյան) և ,,Կոնստրուկցիոն նյութերի տեխնոլոգիա,, (դասախոս Բ.Խոդերյան) առարկաների լաբորատոր դասերը: Դասերի ընթացքը նորմալ է: Ուսանողները գոհ են դասապրոցեսից: Բացակայություններ չկան:

3/Հ.Հովհաննիսյան-Այս կիսամյակում 404 լաբորատորիայում իրականացվում է ,,Ավտոմատիկա և կենցաղային սարքավորումներ,, և ,,Ռադիոէլեկտրոնիկա և

ռադիոմոնտաժման պրակտիկում,, առարկաների լաբորատոր դասերը: Դասապրոցեսները նորմալ են:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ուսումնական լաբորատորիաների վիճակը համարել նորմալ:

4. ԼՍԵՑԻՆ-“Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Հեռակա բակալավր 3-րդ կուրսում ,,Կիրառական մեխանիկա,, առարկայի կուրսային նախագծից որպես հանձնարարություն նախապես տրվում է Միաստիճան գլանական ռեդուկտորի նախագիծ: Կուրսային աշխատանքի համար կազմվել են ելակետային տվյալներ: Առաջարկում եմ դրանք հաստատել:

Քննարկումից հետո

ՈՐՈՇԵՑԻՆ – -“Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաները հաստատել:

5. ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահիրադյան- Այս կիսամյակում նախատեսվում է յոթ դասալսում: Գրաֆիկը կցվում է:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումների գրաֆիկը հաստատել:

6. ԼՍԵՑԻՆ- Հեռակա ուսուցման պրակտիկայի 3-րդ, 4-րդ կուրսերի և առկա 2-րդ կուրսի շարունակական պրակտիկայի վիճակի քննարկում և հեռակա 5-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Առկա բակալավր 2-րդ կուրսի ուսանողները իրենց շարունակական պրակտրկան անց են կացնում թիվ 57 դպրոցում: Պրակտիկայի ընթացքը նորմալ է:

Հեռակա 3-րդ կուրսի ուսանողները կցված են դասընթացներին և ակտիվորեն մասնակցում են դասապրոցեսներին:

Հեռակա 4-րդ կուրսի ուսանողները կցված են ,,Արմատ,, լաբորատորիային՝ Հասմիկ Այվազյանի ղեկավարությամբ: Դասերը անց են կացվում առցանց: Որևէ խնդիր չկա:

Հեռակա 5-րդ կուրսի պրակտիկայի համար տեղի է ունեցել կոնֆերանս, որոշվել է, որ ուսանողները պետք է միանան Տ.Այվազյանի առցանց դասերին: Չորեքշաբթի պետք է տեղի ունենա առցանց հանդիպում՝ խորհրդատվություն, որի ընթացքում կզեկուցեն իրենց դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքի մասին, իսկ հինգշաբթի և

ուբաթ օրերին կմասնակցեն առերես դասապրոցեսներին: Պրակտիկան անց է կացվում խառը ձևով:

ՈՐՈՇԵՑԻՆ –Պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ.8

Մարտի 26-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:
2. Ավարտական աշխատանքների վիճակը:
3. Ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:
4. 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:
5. 1-ին կուրսի մագիստրանտների մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման մասին:
6. 1-ին կուրսերի միջանկյալ քննությունների նախապատրաստում:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Ա.Հարությունյան-Դասավանդում եմ առկա 4-րդ կուրսում: Դասերն առցանց են: Դասապրոցեսը նորմալ է: Բացակաները հիմնականում չեն լինում:
2/ Բ.Խոդերյան-Ես դասավանդում եմ առկա բակալավրի 4-րդ, մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ դասապրոցեսները իրականացվում են առցանց: Հաճախումները նորմալ են:
3/ Ս.Վարդանյան-Դասավանդում եմ առկա բակալավրի 2-րդ և մագիստատուրա 1-ին կուրսերում: 2-րդ կուրսում դասընթացները նորմալ են, բացակայող ուսանող չկա, իսկ 1-ին մագիստրոսները պրակտիկայի են:
4/ Ն.Օրդյան-Ես դասավանդում եմ միայն 4-րդ կուրսի բակալավրիատում: Սիստեմատիկ բացակայող ուսանող չկա: Դասապրոցեսն առցանց է:
5/Տ.Այվազյան-Դասավանդում եմ բակալավր 4-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերում: Դասապրոցեսն առցանց է: Ինձ մոտ էլ բացակաները քիչ են:
6/ Ա.Սահրադյան-Ես դասավանդում եմ բակալավր 1-ին, մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերում: Մագիստրոս 1-ին կուրսեցիները պրակտիկայի են, իսկ մյուս կուրսերում դասապրոցեսն ընթանում է նորմալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առցանց և առկա ուսուցման վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Դիպլոմային և ավարտական աշխատանքների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բոլոր դասախոսները նշեցին, թե առկա և հեռակա բակալավրերի և թե մագիստրոսների մոտ ավարտական աշխատանքների վիճակը բավարար է, ուսանողներն աշխատում են իրենց թեմաների վրա: Մինչև պաշտպանությունը ամեն ինչ ավարտած կլինեն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Բակալավրիատի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ - Ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս ուսումնական տարում ավարտական աշխատանքների պաշտպանությունները լինելու են առկա համակարգում՝ մայիսի վերջում, իսկ հեռակաների մոտ՝ հունիս ամսին, ուստի առաջարկում եմ ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները նշանակել մագիստրոս 2-րդ կուրսում- 29.04.2021թ, բակալավր 4-րդ կուրսում՝ 30.04.2021թ. և հեռակա 5-րդ կուրսում՝ 21.05.2021թ, որպեսզի , եթե լինեն թերություններ և բացթողումներ, մինչև պաշտպանություն շտկվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ–Ավարտական կուրսերի նախապաշտպանությունները նշանակել մագիստրատուրա 2-րդ կուրսում՝ 29.04.2021թ, բալկալավր 4-րդ կուրսում՝ 30.04.2021թ., հեռակա 5-րդ կուրսում 21.05.2021թ:

4. ԼՍԵՑԻՆ-1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/Բ.Խոդերյան-1-ին կուրս մագիստրատուրայում իմ ղեկավարությամբ ավարտական աշխատանք է կատարում Լիաննա Հովհաննիսյանը: Թեման հանձնարարված է, գրականությունը տրված է: Բավականին նյութեր ունի: Աշխատանքը ընթացքի մեջ է:

2/Ա.Հարությունյան-Ես ղեկավարում եմ Էլեն Սամվելյանի ավարտական աշխատանքը: Առայժմ ամեն ինչ կարգին է:

3/Ս.Վարդանյան-Իմ ղեկավարությամբ իր ավարտական աշխատանքն է կատարում Արմենուհի Հակոբյանը: Թեման տրված է, գրականությունը կա, աշխատանքը ընթացքի մեջ է:

4/Ն.Օրդյան-Ես ղեկավարում եմ Նաիրի Պողոսյանի ավարտական աշխատանքը: Առաջին գլուխն ամբողջովին ավարտել է, այժմ աշխատում է երկրորդ գլխի վրա:

5/Տ.Այվազյան-Իմ ղեկավարությամբ իր ավարտական աշխատանքն է կատարում Սոնա Վարդանյանը: Թեման համձնարարված է, գրականությունը տրված է, աշխատանքը ընթացքի մեջ է:

6/Մ.Աղաջանյան- Ես ղեկավարում եմ մագիստրանտ Նելլի Հովհաննիսյանի թեզը: Աշխատանքը ընթացքի մեջ է:

7/Ա.Սահրադյան-Ես ղեկավարում են Անուշ Ղուլիջանյանի ավարտական թեզը: Թեման համձնարարված է, աշխատանքը կատարվում է:

ՈՐՈՇԵՑԻՆ-1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման վիճակը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ-1-ին կուրսի մագիստրանտների մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման մասին:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Այս կիսամյակում մագիստրատուրա 1-ին կուսի ուսանողների պրակտիկան անց է կացվում առցանց տարբերակով: Բոլոր ուսանողները կցվել են իրենց թեզերի ղեկավարների դասընթացներին: Մասնակցում են դասապրոցեսներին, ինչպես նաև վարում են դասերը: Նյութերը կտեղադրվեն համապատասխան հարթակներում:
   ՈՐՈՇԵՑԻՆ –1-ին կուրսի մագիստրանտների մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ- 1-ին կուրսերի միջանկյալ քննությունների նախապատրաստում:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կրսամյակում ըստ ուսումնական պլանի բակալավր 1-ին կուրսի առաջին միջանկյալ ստուգումները նախատեսված են 06.04.21-12.04.21թ: Ուստի խնդրում եմ +1-ին կուրսում դասավանդող դասախոսներին, ժամանակին տեղադրել միջանկյալ ստուգման տարբերակները և գնահատման արդյունքները::
   ՈՐՈՇԵՑԻՆ – 1-ին կուրսերի միջանկյալ քննությունների նախապատրաստման ընթացքը ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Արձանագրություն № 9

Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի 29.04.2021թ-ի նախապաշտպանությունից

ԼԱՍԵՑԻՆ-Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների ավարտական թեզերի նախապաշտպանությունները

ԱՐՏԱՀԱՅՏՎՈՑԻՆ-

1. Առուստամյան Զինաիդա - ղեկավար՝ Տ.Այվազյան

Թեման «Գեոթերմալ սարքավորումներ և էլեկտրակայաններ» թեմայի հետազոտումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Մշակել է «Գեոթերմալ սարքավորումներ և էլեկտրակայաններ» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ կիրառելով ժամանակակից կրթական ակտիվ մեթոդներ և ՏՀՏ-ներ : Ուսումնասիրել է գեոթերմալ սարքավորումների և էլեկտրակայանների կառուցվածքներն ու աշխատանքի սկզբունքները, հաշվի առնելով, որ աշխարհում սպառվում են հոսանքի աղբյուրի ավանդական պաշարները, էներգետիկայի ապագան կապվում է վերականգնող էներգիայի աղբյուրների հետ:

2. Ավետիսյան Նվարդ –ղեկավար՝ Ա Հարությունյան

Թեման-Արդյունաբերությունում և ուսումնական հաստատություններում աշխատանքի պաշտպանության հիմնախնդիրների հետազոտումը:

Ուսումնասիրել է վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա և դրանց դեմ պայքարի միջոցները: Աշխատանքի պաշտպանության հիմնական խնդիրը է հանդիսանում տեխնիկական, սանիտարահիգիենիկ, իրավական և կազմակերպչական միջոցառումների ամենօրյա անցկացումը և վերահսկումը, որոնք ուղղված են աշխատապայմանների բարելավմանը: Պարզաբանել է ուսումնական հաստատություններում, արտադրական տարածքներում, աշխատատեղերում գոյություն ունեցող մի շարք գործոնների ազդեցությունը, որոնք տարբեր են իրենց բնույթով և մարդու վրա ներգործելու եղանակով:

3. Արզումանյան Կարինե- ղեկավար՝ Բ.Խոդերյան

Թեման-Սննդի պատրաստման տեխնոլոգիաների դասավանդման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում:

Ուսումնասիրել է «Սննդի պատրաստման տեխնոլոգիա» բաժնի դասերի կազմակերպման և դասավանդման հիմնախնդիրները: Մշակել է ժամանակակից ինտերակտիվ դասեր՝ կիրառելով ՏՀՏ-ներ:

4. Արթենյան Շուշաննա-ղեկավար՝ Ն.Օրդյան

Թեման- Մանկավարժական ԲՈՒՀ-երի «Ռոբոտոտեխնիկա» դասընթացի համար լաբորատոր աշխատանքների մշակումը Arduino տպասալի կիրառմամբ:

Arduino տպասալի կիրառմամբ մշակել է տարբեր նախագծեր, որոնք կարող են օգտագործվել մանկավարժական ԲՈՒՀ-երի «Ռոբոտոտեխնիկա» դասընթացի լաբորատոր աշխատանքների կազմակերպման համար: Ուսումնասիրել է Arduino տպասալի կառուցվածքը և կիրառման ոլորտները: Ուսումնասիրել և յուրացնել է Arduino տպասալի ծրագրային ապահովումը: Կազմել է պարզ խնդիրներ, որոնք կարելի է իրականացնել Arduino տպասալի օգնությամբ: Ներկայացրել է «Ռոբոտատեխնիկա» դասընթացի լաբորատոր աշխատանքների փաթեթ՝ Arduino տպասալի կիրառմամբ:

5. Գաբրիելյան Մերի- ղեկավար՝ Բ.Ա. Խոդերյան

Թեման- Փայտի ֆիզիկամեխանիկական հատկությունների հետազոտումը «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում:

Հետազոտել է արդյունաբերական նշանակություն ունեցող փայտատեսակների ֆիզիկամեխանիկական հատկությունները: Թեմայի հետազոտության արդյունքում նախատեսված «Փայտի ֆիզիկամեխանիկական հատկությունները» թեմայի համար մշակել է դասավանդման մեթոդիկա՝ կիրառելով ժամանակակից ակտիվացնող կրթական մեթոդներ և ՏՀՏ-ներ:

6. Քոչարյան Աշխեն-ղեկավար՝ Ս.Վարդանյան

Թեման-«Աքսոնոմետրիա» և «Աքսոնոմետրիկ պրոյեկցիաների կառուցումը» թեմաների դասավանդումը որպես աշակերտների տարածական պատկերացման զարգացման միջոց:

Ուսումնասիրել է 7-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի «Գրաֆիկա» բաժնի «Աքսոնոմետրիա» և «Աքսոնոմետրիկ պրոյեկցիաների կառուցումը» թեմաների դասավանդման առանձնահատկությունները: Ներկայացրել է «Աքսոնոմետրիա» և «Աքսոնոմետրիկ պրոյեկցիաների կառուցումը» թեմաների դասավանդման նոր մեթոդիկա՝ ժամանակակից կրթական մեթոդների և ՏՀՏ-ների կիրառմամբ:

Նախապաշտպանության տեսաձայնագրությունը տեղադրված է համապատասխան դասընթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Թեև ի նկատի ունենալով աշխատանքներում առկա փոքր թերությունները երաշխավորել պաշտպանության: Հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանություն հսկել թերությունների վերացումը:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

Առկա բակալավր 4-րդ կուրսի 30.04.2021թ-ի նախապաշտպանությունից
ԼԱՍԵՑԻՆ-Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական թեմաների նախապաշտպանությունները
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- 1. Բաբայան Լիլիթ - ղեկավար՝ Ն. Օրդյան
Թեման-««Տեխնոլոգիա» առարկայի 7-րդ դասարանի «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման էլեկտրոնային դիդակտիկ նյութերի մշակումը:

Ուսումնասիրել է «Տեխնոլոգիա» առարկայի «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման առանձնահատկությունները: Կատարել է թեմայի դասավանդման պլանավորում, մշակել է էլեկտրոնային դիդակտիկ նյութեր՝ թեմայի գործնական աշխատանքների դասավանդումն արդյունավետ կազմակերպելու համար:

2. Բագրատյան Ռազմիկ -ղեկավար՝ Ա.Սահրադյան
Թեման-«Լիսեռ-անվակի պատրաստման տեխնոլոգիան և ջերմամշակումը» թեմայի դասավանդումը նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Աշխատանքում ներկայացված է սովորողներին ծանոթացնել լիսեռատիպ դետալների և սռնիների պատրաստման և ԲՀՀ եղանակով ջերմամշակման տեխնոլոգիական առանձնահատկություններին՝ կիրառելով ժամանակակից կրթական մեթոդներն ու ՏՀՏ-ները:

3. Գալստյան Գայանե –ղեկավար՝ Մ.Աղաջանյան

Թեման- «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի դասավանդման առանձնահատկությունները 5-րդ դասարանում:
Աշխատանքում ներկայացվել է նյութերի գեղարվեստական մշակման տեսակները, առանձնահատկություններն, ինչպես նաև դրանց կատարման եղանակները:

4. Գրիգորյան Միլենա -ղեկավար՝ Ս.Վարդանյան
Թեման- 6-րդ դասարանի աշակերտների գրաֆիկական հմտությունների զարգացումը տեխնոլոգիայի դասընթացին:
Միլենան ուսումնասիրել և ներկայացրել է 6-րդ դասարանի աշակերտների գրաֆիկական հմտությունների ձևավորման և զարգացման մեխանիզմները:
5. Մարտոյան Աննա- ղեկավար՝ Ս.Վարդանյան
Թեման-«Նախագծային աշխատանքների իրականացումը որպես աշակերտների տեխնոլոգիական մտքի զարգացման միջոց:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրել է ,,Տեխնոլոգիա,, առարկայի 7-րդ դասարանի ,,Նախագիծ,, թեմայի բովանդակային կառուցվածքն ու առանձնահատկությունները: Նշել է նախագծային աշխատանքների իրականացման ուղիները և բերել օրինակներ: Ավարտական աշխատանքի մշակման արդյունքները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցներում և կնպաստեն սովորողների գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

6. Իվանյան Անի -ղեկավար- Բ.Խոդերյան

Թեման- «Գորգագործություն» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին դպրոցի տեխնոլոգիայի դասերին:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրել և վերլուծել է մասնագիտական և տեղեկատվական գրականությունը գորգագործության վերաբերյալ: Ներկայացրել է հայկական գորգերի առանձնահատկությունները և դրանց պատրաստման տեխնոլոգիաները: Պատրաստել է «Գորգագործություն» թեմայով դասերի անցկացման, կիրառելով ՏՀՏ–ներ և ուսուցման ակտիվ կրթական մեթոդներ:

7. Սարգսյան Կարինե -ղեկավար Ա.Հարությունյան

Թեման-«Փայտամշակման տեխնոլոգիա» բաժնի դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում:

Թեմայում ուսումնասիրել է 6-րդ դասարանի <<Փայտամշակման տեխնոլոգիա>> բաժնի բովանդակությունը: Մշակել գործնական աշխատանքների արդյունավետ անցկացման մեթոդներ:

8. Վանոյան Մարիամ -ղեկավար Բ. Խոդերյան

Թեման-«Մաքրամե» թեմայի դասավանդման մեթոդիկան միջին դպրոցում:

Աշխատանքում ուսանողը ուսումնասիրել և վերլուծել է մասնագիտական և տեղեկատվական գրականությունը մաքրամեյի վերաբերյալ: Ներկայացրել է մաքրամեյի տեսակները և հյուսման տեխնիկան: Պատրաստել է «Մաքրամե» թեմայով դասեր, կիրառելով ՏՀՏ–ներ և ուսուցման ակտիվ կրթական մեթոդներ: Մշակել է մաքրամեյի վերաբերյալ պաստառներ:

Նախապաշտպանության տեսաձայնագրությունը տեղադրված է համապատասխան դասընթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Աշխատանքներում առկա փոքր թերություններով հանդերձ՝ երաշխավորել պաշտպանության և հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանությունը հսկել թերությունների վերացումը:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.11

Մայիսի 27-ի տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:
2. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերի և տոմսերի հաստատում: Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:
3. Հեռակա բաժնի 5-րդ կուրսի միջանկյալ ստուգումների և պետական ավարտական քննությունների կազմակերպման մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- ՈՒսումնական գործընթացքների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1/ Բ.Խոդերյան-Ունեմ մեկ դասընթաց մագիստրոս 1-ին կուրսում: Դասերը ընթանում են նորմալ: Բացթողումներ չունենք: Այս շաբաթ կվերջացնենք դասապրոցեսը:

2)Ս.Վարդանյան-Ես դասավանդում եմ 1-ին բակալավրիատում և 1-ին մագիստրոսների մոտ: Դասապրոցեսը նորմալ է: Մեզ մոտ էլ վերջին շաբաթն է:

3/ Տ.Այվազյան-Ինձ մոտ էլ միայն առաջին մագիստրոսներն են: Մեզ մոտ էլ դասերի իրականացման վերջին շաբաթն է: Ամեն ինչ նորմալ է:

4)Ն.Օրդյան- Ինձ մոտ վերջացել է դասապրոցեսը:

5/Ա.Հարությունյան-Ինձ մոտ նույնպես դասապրոցեն ավարտվել է:

5)Մ.Աղաջանյան-Ես դասավանդում էի 1-ին բակալավրիատում: Ինձ մոտ նույնպես դասերը ավարտվում են:

6)Ա.Սահրադյան-Ես դասավանդում եմ 1-ին բակալավրիատում և 1-ին մագիստրոսների մոտ: Դասապրոցեսը նորմալ է: Այս շաբաթ կլինի վերջին դասը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առցանց և առկա ուսուցման վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերի և տոմսերի հաստատում: Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան-Քանի որ առաջին միջանկյալ քննությունների քննական տոմսերը հաստատել ենք կիսամյակի սկզբում, առաջարկում եմ 2-րդ միջանկյալ ստուգման հարցատոմսերը հաստատել այս ամբիոնի նիստով՝ 27.05.2021թ: Նույն ամսաթվով հաստատել նաև հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերը և քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առկա և հեռակա ուսուցման բաժինների 2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերը հաստատել 27.05.2021թ-ով:

3. ԼՍԵՑԻՆ - Հեռակա բաժնի 5-րդ կուրսի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների և պետական ավարտական քննությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -1/ Ն.Օրդյան –Հեռակա 5-րդ կուրսի ուսանողները ավարտել են իրենց միջանկյալ քննությունները, որը կազմակերպվեց առցանց: Պատրաստվում են պետական ավարտական քննությանը: Քանի որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը նշանակված է հունիսի 14-ին, առաջարկում եմ նախապաշտպանությունը նշանակել հունիսի 10-ին, որպեսզի ուսանողները հասցնեն ավարտել իրենց աշխատանքները:
Առաջարկի հետ համաձայնություն հայտնեցին ամբիոնի ավարտական աշխատանքների ղեկավար դասախոսները:
ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների ընթացքը համարել բավարար: Նախապաշտպանության օրը նշանակել 10.06.2021թ:

4. Ընթացիկ հարցեր:

ա/ Հեռակա բակալավր 5-րդ կուրսի գրախոսականի և ղեկավարի կարծիքի, ավարտական աշխատանքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Մենք գիտենք, որ ավարտական աշխատանքների համար պետք է կազմվեն գրախոսականներ և ղեկավարի կարծիք, ուստի խնդրում եմ բոլորդ մոտ օրերը գրել այդ գրախոսականները և կարծիքները, որոնք մինչև պաշտպանությունը պետք է տեղադրվի համապատասխան դասընթացի պանակում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ի կատար ածել:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Արձանագրություն № 12

Հեռակա բակալավր 5-րդ կուրսի 10.06.2021թ-ի նախապաշտպանությունից

ԼԱՍԵՑԻՆ- Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողների ավարտական թեմաների Նախապաշտպանությունները

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- 1. Ուսանողները ներկայացրեցին իրենց կողմից կատարած ավարտական աշխատանքները և սահիկահանդեսները:
Ամբիոնի դասախոսները նշեցին աշխատանքներում առկա թերությունները, որոնք պետք է ուղղվեն մինչև պաշտպանությունը:

Նախապաշտպանության տեսաձայնագրությունը տեղադրված է համապատասխան դասընթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Աշխատանքներում առկա փոքր թերություններով հանդերձ՝ երաշխավորել պաշտպանության և հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանությունը հսկել թերությունների վերացումը:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.13

Հունիսի 15-ին տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:
2. Ամբիոնում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վիճակը:
3. Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:
4. 2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները :
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ - Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակի և խնդիրների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հարգելի դասախոսներ, խնդրում եմ ներկայացրեք առցանց հարթակում դասընթացների, ուսանող-դասախոս փոխհարաբերությունների և հաղորդակցման վիճակը:
2) Վարդանյան Ս.- Այս ուսումնական տարում Google Classroom հարթակում վարել եմ թվով 14 էլեկտրոնային դասընթաց, որոնց պնակներում տեղադրված են եղել համապատասխան առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսությունների թեմաները և այլ նյութեր: 2-րդ կիսամյակում հիմնականում դասավանդել եմ առերես սկզբունքով: Միայն երկու շաբաթով եմ իրականացրել առցանց դասեր՝ պայմանավորված ՀՀ-ում տիրող համաճարակային իրավիճակով և լիարժեք հեռավար ուսուցման անցնելու որոշման հետ: ՀՊՄՀ-ի որակի վարչության էլեկտրոնային կառավարման բաժնի մշտադիտարկման արդյունքում ինձ էլեկտրոնային դասընթացներից մեկում դիտարկվել էր թեմատիկ տրոհման բացակայություն, որն ուղղվել է: Դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ իրականում թեմատիկ տրոհումը եղել է պատրաստ, սակայն ակտիվացված չի եղել: Ուսանողների հետ որևէ խնդիր չի եղել:
3) Այվազյան Տ. - Այս կիսամյակում, ըստ դասացուցակի, իրականացրել եմ հեռավար և առերես ուսուցում: Ինձ մոտ որևէ խնդիր չի եղել: Ամեն ինչ եղել է նորմալ:

4) Խոդերյան Բ.- Այս կիսամյակում իրականացրել եմ և առցանց, և առերես դասեր: Classroom հարթակում տեղադրված են եղել բոլոր անհրաժեշտ նյութերը: Ինձ մոտ ևս ամեն ինչ կարգին է:

5) Հարությունյան Ա.- Ինձ մոտ դասերը նշանակված են եղել առերես տարբերակով: Classroom հարթակում եղել են բոլոր նյութերը: Խնդիրներ չեն եղել:

6) Աղաջանյան Մ.- Ես նույնպես վարել եմ առերս դասեր և ընթացքում խնդիրներ չեն եղել:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – Կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) դասախոս-ուսանող հաղորդակցման վիճակը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Սահրադյան Ա.- Այս ուսումնական տարում ամբիոնը հրատարակել է թվով երկու գիտական հոդված և հրատարակության է տրվել ևս երկու հոդվածներ: Նախապատրաստվում է ներկայացման թվով երկու գիտամեթոդական ձեռնարկ:

Քննարկման արդյունքնում

ՈՐՈՇԵՑԻՆ - Ամբիոնում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վիճակը համարել բավարար՝ ՀՀ-ում տիրող համաճարակային իրավիճակով պայմանավորված:

3. ԼՍԵՑԻՆ - Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Սահրադյան Ա.- Հարգելի գործընկերները, այս ուսումնական տարվա ավարտական պետական որակավորման հետ կապված որևէ խնդիր չի եղել: Արդունքները հետևյալն են՝

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Գնահատականները			
		գերազանց	լավ	բավարար	անբավարար
ԱԲ	8	7	1	-	-
ԱՄ	6	5	1	-	-
ՀԲ	21	6	14	1	-

Ավարտական քննությունների ժամանակ Ձեր ուշադրությունն եմ սևեռում պարոն Վ.Սարգսյանի դիտողությանը, որն ուղղված է որոշ ավարտական աշխատանքների եզրակացություններին:

Պրն. Սարգսյանի դիտողությունը, գտնում եմ, որ տեղին էր և ճիշտ, որովհետև մի մասի մոտ էլ ուսման մեթոդների հարցում հստակ արտագրված էր եզրակացությունները, որոնք վերաբերվում էին ուսուցչին իր կայացման ժամանակահատվածում:
Կարծում եմ, որ Դուք համակարծիք կլինեք, որ այսուհետ պր-ն Բ. Խոդերյանը հաջորդ տարվանից ամպայման կարդում է ավարտական աշխատանքների եզրակացությունները և բացառում կրկնությունները և անիմաստ եզրակացությունները:
Ի դեպ եզրակացությունները պետք է վերաբերվեն և համապատասխանեն հանձնարարվող թեմային:
ՈՐՈՇԵՑԻՆ- Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքները համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Այս կիսամյակում մեկական դասալսումներ եմ իրականացրել բոլոր դասախոսների մոտ՝ և առցանց, և առերես: Դասերի ընթացքը նորմալ էր: Ուսանողներն ակտիվ մասնակցում էին դասապրոցեսին: Իհարկե կային աննշան թերություններ,սակայն վստահ եմ, որ մյուս ուսումնական տարում այն կշտկվի:
ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների արդյունքները համարել բավարար:

5. Ընթացիկ հարցեր

5.1. ԼՍԵՑԻՆ- ԼՍԵՑԻՆ- Բ. Խոդերյանի, Ա. Հարությունյանի և Մ. Աղաջանյանի համահեղինակած «Փայտամշակման տեխնոլոգիա» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույց» մեթոդական աշխատանքի քննարկման և տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ա. Սահրադյանը, ով ներկայացրեց ամբիոնի դոցենտներ Բ.Խոդերյանի, Ա.Հարությունյանի և Մ. Աղաջանյանի համահեղինակությամբ կազմված լաբորատոր աշխատանքների ուղեցույցը, որը վերաբերում է «Փայտամշակման» դասընթացին: Ուղեցույցն իր մեջ ներառում է թվով 5 լաբորատոր աշխատանքներ, շարադրված է գրագետ, տեխնիկական հայերենով, 40 էջ ծավալով: Ներկայացվեց նաև երկու գրախոսությունները:
Արտահայտվեցին պրոֆ.պաշտ. Տ. Այվազյանը, դոցենտներ Ս. Վարդանյանը և Ն. Օրդյանը, արհեստանոցի վարիչ Գ. Տաբիրյանը, ովքեր բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և երաշխավորեցին հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Բ. Խոդերյանի, Ա. Հարությունյանի և Մ. Աղաջանյանի համահեղինակած «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» երաշխավորել հրատարակման:
2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Խորհրդին Բ. Խոդերյանի, Ա. Հարությունյանի և Մ. Աղաջանյանի համահեղինակած

«Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու խնդրանքով:

5. 2. ԼՍԵՑԻՆ- Ա.Ի.Սահրադյանի, Բ.Ա. Խոդերյանի «Մեքենաշինության տեշխնոլոգիա» առարկայի դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույց» մեթոդական աշխատանքի տպագրության երաշխավորելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ս.Բարդանյանը, ով ներկայացրեց ամբիոնի պրոֆեսոր Ա.Սահրադյանի և դոցենտ Բ.Խոդերյանի համահեղինակությամբ կազմված լաբորատոր աշխատանքների ուղեցույցը, որը վերաբերում է «Մեքենաշինության տեշխնոլոգիա» դասընթացին: Ուղեցույցն իր մեջ ներառում է թվով 5 լաբորատոր աշխատանքներ, շարադրված է գրագետ, տեխնիկական հայերենով, 50 էջ ծավալով: Ներկայացվեց նաև երկու գրախոսությունները:
Արտահայտվեցին պրոֆ.պաշտ. Տ. Այվազյանը, դոցենտներ Ս. Վարդանյանը և Ն. Օրդյանը, արհեստանոցի վարիչ Գ. Տաբիրյանը, ովքեր բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և երաշխավորեցին հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Ա.Ի.Սահրադյանի, Բ.Ա. Խոդերյանի «Մեքենաշինության տեշխնոլոգիա» առարկայի դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույց» -ը երաշխավորել հրատարակման:

2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Ա.Ի.Սահրադյանի, Բ.Ա. Խոդերյանի համահեղինակած «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու խնդրանքով:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ.14

Հուլիսի 2-ին տեղի ունեցած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Հաշվետվություն 2020-2021 ուս.տարվա ամբիոնի կատարած աշխատանքների քննարկում և գնահատում:
2. 2021-2022 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի բոլոր անդամները :

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1)ԼՍԵՑԻՆ-2020-2021 ուս. տարվա ամբիոնի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ Ձեզ եմ ներկայացնում ամբիոնի 2020-2021 ուս տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը.

Հաշվետու ուսումնական տարում «Տեխնոլոգիական կրթություն» ամբիոնը սպասարկել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության (առկա բակալավրիատ և մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ) թվով 120 ուսանողների ուսուցման գործընթացը:

2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների թիվն ըստ կուրսերի

Առկա բակալավրիատ		Առկա մագիստրատուրա		Հեռակա բակալավրիատ	
կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը
1-ին	4	1-ին	7	1-ին	17
2-րդ	3	2-րդ	6	2-րդ	15

3-րդ	-			3-րդ	23
4-րդ	8			4-րդ	16
				5-րդ	21
Ընդամենը	15		13		92
Ընդամենը	120				

Ամբիոնն առաջնորդվել է նախապես կազմված և հաստատված ուսումնական պլաններով:

2020-2021 ուս. տարում ամբիոնն ունեցել է 14 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր:

1. ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան.

ա) ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով:

2020-2021 ուս. տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5243 ժամ, որը կազմել է 6.5 հաստիք և բաշխվել ամբիոնի դասախոսների միջև հետևյալ կերպ.

տեխ. գիտ. դոկ., պրոֆ.- 1,0 հաստիք,

ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ.պաշտ. – 1.0 հաստիք,

տեխ. գիտ. թեկն., դոց. – 2.50 հաստիք,

դոցենտ- 1,5 հաստիք:

բ) Ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների գործնական - պրակտիկ սպասարկման համար:

Անհրաժեշտ է նշել, որ 2020-2021 ուս. տարվա մագիստրատուրայի ավարտական կուրսի թվով 4 մագիստրոսներին տեղավորել ենք աշխատանքի, իսկ 1-ին կուրսի 7 մագիստրանտներից 3-ը աշխատում են դպրոցներում:

գ) Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաները ներառված են եղել գործող ուսումնական պլաններում:

դ) Երկու քննաշրջաններն էլ (ձմեռային, ամառային) կազմակերպվել և անցկացվել են դեկանատի կողմից կազմված ժամանակացույցերին համապատասխան:

ե) ՈՒսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գործող գնահատման համակարգերին համապատասխան:

զ) Պետական ավարտական որակավորման քննություններից առաջ ամբիոնի բոլոր առարկաների գծով կազմակերպվել են խորհրդատվություններ:

Ամբիոնի ակադեմիական առաջադիմության պատկերը պետական ավարտական որակավորման քննությունների վերաբերյալ հետևյալն է.

2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների ակադեմիական առաջադիմությունը

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Գնահատականները			
		գերազանց	լավ	բավարար	անբավարար
ԱԲ	8	7	1	-	-
ԱՄ	6	5	1	-	-
ՀԲ	21	6	14	1	-

է) Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ:

2020-2021 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների պրակտիկաները

Պրակտիկայի տեսակը	Կուրսը	Կիսամյակը	Պրակտիկայի տևողությունը
Մանկավարժական պրակտիկա (շարունակական)	ԱԲ2	2-րդ	Շաբաթական 1 օր

Մանկավարժական պրակտիկա (ակտիվ)	ԱԲ4	1-ին	6 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ3	2-րդ	4 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ4	1-ին	2շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ	1-ին	4շաբաթ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և ավարտական հաշվետվությունների քննարկմանն ու որակին:

2. Գիտամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների գծով.

ա) Կազմվել են դասախոսների 2020-2021 ուս. տարվա աշխատանքային անհատական պլաններ:

բ) Ամբիոնի աշխատակիցների կողմից գիտական ժողովածուներում հրատարակվել են 2 գիտական հոդվածներ,

գ) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ամբիոնի գծով դասավանդվող առանձին առարկաների դրվածքը:

դ) Ամբիոնը համագործակցում է.

- Երևանի ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Հիդրոմետալուրգիայի և նյութագիտության պրոբլեմային լաբորատորիաների հետ:
- ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի «Նյութագիտություն» և «Հարթ թաղանթների ֆիզիկա» լաբորատորիաների հետ, որտեղ իրենց մագիստրոսական թեզերին առնչվող փորձերն են իրականացնում մեր մագիստրանտները:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ:

3. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

բ) Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին:

գ) Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են թվով 16 դասալսումներ՝ ըստ հաստատված գրաֆիկի :

4. Դասախոսների վերապատարաստման աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի վարիչ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի. Սահրադյանը 2007թ-ից հանդիսանում է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև տեղական և արտասահմանյան ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

բ)Ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ն.Ա. Օրդյանը ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ: Դոցենտ Նունե Օրդյանը որպես խորհրդատու ընդգրկված է ‹‹Կրթական ծրագրերի կենտրոն››-ի (ԾԻԳ) ‹‹Կրթության բարելավում›› ծրագրի շրջանակներում «Տեխնոլոգիա» ոլորտի ‹‹Տեխնոլոգիա միջին դասարանների համար›› հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնում կատարված աշխատանքները համարել բավարար:

2) ԼՍԵՑԻՆ-2021-2022 ուս.տարվա ամբիոնի ուսումնական ծավալների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ 2021-2022 ուսումնական տարվա համար հաստատվել է դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունը: Հաջորդ ուսումնական տարում ամբիոնում ունենք 6 հաստիք, որոնք բաշխվել է դասախոսների վրա՝ 0,5 հաստիք - Ն.Օրդյան և Մ.Աղաջանյան, իսկ մյուս դասախոսների ծանրաբեռնվածությունը հաստատվել է 0,75 հաստիքով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան